ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-391-04. 10. 2022-ԳԿ-011/) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Վերնագիր	Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսվում է «Հանրակրթության մասին» օրենքում կատարել միայն փոփոխություններ, անհրաժեշտ է նախագծի վերնագիրը խմբագրել՝ հանելով «և լրացումներ» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	նախագծի 3-րդ հոդված	Խմբագրել, 2-րդ նախադասության ձևակերպումը, քանի որ հակասում է Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին.	Ընդունվել է, խմբագրվել է. *«Մինչև 100 սովորող ունեցող հանրակրթական ուսումնական հաստատության վարչական աշխատողը կարող է արտամրցութային հիմունքներով աշխատանքային պայմանագրի հիման վրա դասավանդել այլ հանրակրթական ուսումնական հաստատությունում:»*	Ընդունվել է, խմբագրվել է.

3.	Կառավարություն	նախագծի 4-րդ հոդված	շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6.2. հաստատում է պետական ուսումնական հաստատության համակարգողի նշանակման կարգը.»:	Չի ընդունվել	Չի ընդունվել
4.	Կառավարություն	նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներ	Հաշվի առնելով նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսվող կարգավորումների բովանդակությունը՝ հիշյալ հոդվածներով սահմանվող դրույթները նախատեսել նոր շարադրվող խմբագրությամբ	Չի ընդունվել	Չի ընդունվել